



Կ Ա Ր Գ

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼԱՍԱՐԱՆԻ ՀԵՏՐՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարան (այսուհետ՝ Համալսարան) հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանի համակարգ ընդունվել կարող են դիպլոմավորված մասնագետները և մագիստրոսական որակավորում ունեցող անձիք:
2. Նշված անձիք պետք է ստանան համապատասխան ամբիոնի դրական եզրակացությունը և ղեկավարի գրավոր համաձայնությունը:
3. Հայցորդության ձևակերպման գործընթացը Համալսարանում կազմակերպվում է սեպտեմբերի 1-ից նոյեմբերի 20-ը:
4. Որակավորման քննությունները հանձնելու և ատենախոսությունն ավարտելու համար հայցորդներին հատկացվող առավելագույն ժամկետը 5 տարի է:
5. Հայցորդի կարգավիճակով լրիվ ժամկետ անցած անձիք երկրորդ անգամ չեն կարող օգտվել նույն մասնագիտությամբ հայցորդ ձևակերպվելու իրավունքից:
6. Հայցորդների կցումը Համալսարանին ձևակերպվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:
7. Հայցորդները տարեկան մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում, որի հիման վրա ատեստավորվում են Համալսարանի ամբիոնի կողմից: Ատեստավորում չանցած հայցորդները ենթակա են հեռացման:
8. Հայցորդները Համալսարանում անվճար օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից և գրադարանից:
9. Ուսման վարձը սահմանվում է Համալսարանի գիտխորհրդի կողմից: Համալսարանի հետ գործընկերության պայմանագիր ունեցող համալսարանների կամ գիտական հաստատությունների հայցորդները կարող են մասնակցել Համալսարանի դասընթացներին և հանձնել քննությունները անվճար, իսկ այդպիսի պայմանագիր չունեցող հաստատությունների հայցորդները Համալսարանի դասընթացներին մասնակցելու և քննություններ հանձնելու վարձը տարեկան 50 000 դրամ է:
10. Հայցորդների գիտական ղեկավարների վարձատրության չափը որոշվում է Համալսարանի գիտխորհրդի կողմից:
11. Համալսարանը իր դասախոսներին և աշխատակիցներին կարող է կատարել ուսման վարձավճարի զեղչ մինչև 50 %-ի չափով:



Նախագահ
Քարտուղար

ստորագրություն
ստորագրություն

Հ.Վ.Թոքմաջյան
Ա.Ա.Առաքելյան